ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

« » 2023 թ. N

Ձեր 24.07.2023թ.
Մ/29231-2023

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՆԱԽԱԳԱՀ Շ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

ԷԼ. ՀԱՍՑԵ՝ FOI@FOI.AM

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր 24.07.2023 թ. Մ/29231-2023 գրության՝ տեղեկացնում ենք, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին հատկացված չէ առանձնացված բյուջե՝ բացառապես տեղեկատվական արշավների կազմակերպման համար: Այնուհանդերձ՝ ստորև ներկայացնում ենք նախարարության կողմից 2022-23 թթ. իրականացված հստակ պարբերականություն ունեցող տեղեկատվական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը:

Ըստ այդմ, սոցիալական պաշտպանության ոլորտում ԱՍՀ նախարարության կողմից իրականացվող առավել կարևոր ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով՝ տպագրվել են բուկլետներ, պաստառներ, տեղեկատվական թերթիկներ և գրքույկներ, որոնք քաղաքացիներին են փոխանցվել հանրապետության ամբողջ տարածքում գործող Միասնական սոցիալական ծառայության 49 տարածքային կենտրոնների, ինչպես նաև նախարարության Քաղաքացիների ընդունելության բաժնի միջոցով:

2022 թվականին տպագրվել է տեղեկատվական 10 հազար թերթիկ՝ սահմանամերձ բնակավայրում պետական ֆինանսավորմամբ սեփական տուն կառուցելու ծրագրի վերաբերյալ, որի համար ԱՍՀՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից մրցութային կարգով ընտրված տպագրական ծառայությանը փոխանցվել է 101 հազար 600 դրամ: Տպագրվել է ևս 10

հազար բուկլետ՝ երրորդ և հաջորդ երեխայի ծննդյան դեպքում տրվող 50 հազար դրամ աջակցության ծրագրի վերաբերյալ. նույն սկզբունքով իրականացված տպագրական աշխատանքների համար փոխանցվել է 289 հազար 996 դրամ:

Տպագրվել է 2 հազար 400 օրինակ տեղեկատվական գրքույկ (20 էջ)՝ երեխայի ծննդով պայմանավորված աջակցության ծրագրերի վերաբերյալ, որտեղ ներառված են պետության կողմից տրամադրվող բոլոր աջակցության միջոցառումները, ծրագրերը, նպաստերների չափերը, տրամադրման ընթացակարգերը և այլն: Այս նպատակով Նախարարության բյուջեից հատկացվել է 1 մլն 416 հազար դրամ:

Անկանխիկ գործարքներից կենսաթոշակի և նպաստի 10 % հետվճարի ծրագրի լայնածավալ հանրային իրազեկումների շրջանակում տպագրվել է նաև 700 օրինակ պաստառ, որոնք փակցվել են Միասնական սոցիալական ծառայության տարածքային բոլոր կենտրոններում. պաստառների տպագրման համար հատկացվել է 74 հազար 998 դրամ:

2023 թվականին տպագրվել է 15 հազար բուկլետ՝ խնամատարության ինստիտուտի վերաբերյալ, որի համար փոխանցվել է 180 հազար դրամ: Այս տարվա համար նախատեսված մյուս աշխատանքներն ընթացքի մեջ են, որոնք կիրականացվեն նույն ընթացակարգով՝ մրցութային կարգով հաղթող ճանաչված կազմակերպությունների միջոցով:

Տեղեկացնում ենք, որ տեղեկատվական արշավներ կազմակերպվում են պարբերաբար՝ կամ նախարարության ռեսուրսներով, կամ գործընկեր կառույցների կամ կազմակերպությունների հետ համագործակցությամբ. նշված համագործակցությունները լրացուցիչ ֆինանսավորում չեն պահանջում: Օրինակ՝ ԱՍՀ նախարարության կողմից 2022 թ. իրականացվել և այժմ էլ իրականացվում է անկանխիկ գործարքներից կենսաթոշակի և նպաստի 10 % հետվճարի ծրագրի վերաբերյալ «Սեփական փորձով» տեսանյութերի շարքը, որի շրջանակում ծրագրից օգտվող քաղաքացիները, ծրագրի հանրային իրազեկման համատեքստում, ներկայացնում են իրենց փորձառությունը: 2023 թ. ՄԱԶԾ և ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործընկերների հետ համատեղ՝ իրականացվել են մարզային հանդիպումներ և տեղեկատվական արշավներ՝ Անձի ֆունկցիոնալության գնահատման նոր համակարգի վերաբերյալ: Արշավի շրջանակում տեղում շահառուներին և թիրախային այլ խմբերի ներկայացուցիչների ներկայացվել է համամակարգի արդյունավետությունը, ընթացակարգերը, հիմնական փոփոխությունները: Նույն համագործակցության շրջանակում պատրաստվել են նաև անիմացիոն հոլովակներ, որոնք հրապարակվել են նախարարության պաշտոնական ֆեյսբուքյան էջում և յութուբյան ալիքում: Այս տարի նախատեսվում է տեղեկատվական արշավներ կազմակերպել՝ Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համագործակցությամբ՝ ընտանիքների անապահովության գնահատման նոր համակարգի ներդրման վերաբերյալ:

Գրության երրորդ հարցի վերաբերյալ հայտնում ենք, որ 2022 թ. նախարարության պաշտոնական կայքի սպասարկմանն ուղղված ֆինանսավորում չի հատկացվել:

Չորրորդ հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ առաջիկայում նախատեսվում է գործարկել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նոր կայքէջը, որի պատրաստման աշխատանքներն իրականացվում են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորք տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամի կողմից:

7/31/2023

X

ԶԱՐՈՒՀԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՄԱՄՈՒԼԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: MANUCHARYAN ZARUHI 6801960849 **Զ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ**

Կատարող՝ Ե. Յայլախանյան
ԱՍՀՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ
010 52 14 31